




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



891.71-2

Ն-59

19 NOV 2010

Ա. Լ. ՆԵՎԵՐՈՎ

ՄԱՏՂԱԶ ԾԻԼԵՐ

Պիես 1 գործ.



Ա. ԻՐԿՈՒՏՈՎ

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԸԱՐԱՆ

Պիես 3 պատկ.

Փոխադր. Գ. ԱԶՆԱՎՈՐՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ — 1926

30 OCT 2006

Ա. ԵՎԵՐՈՎ

215

ՄԱՏՂԱԸ ԾԻԼԵՐ

Պիես 1 գործ.

Ա. ԻՐԿՈՒՏՈՎ

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԶԱՐԱՆ

Պիես 3 պատկ.

Փոխադր. Գ. ԱՋՆԱՎՈՐՅԱՆ



21278

1/10

891.71
9-59

198

ՄԱՏՂԱՇ ԹԻԼԵՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԿԱՐՈ	.	.	.	.	.	12	տարեկան դպրոցի աշակերտ
ԹԱԳՈՒՇ, Կարոյի ֆույրը	.	.	.	.	.	10	» » աւ.-տունի
ԻԵՎՈՐԴ, հայրը	}	Կարոյի յեվ Թա-	գուսի ծնողները	.	.	32	» » գյուղացի
ՄԱՆԱ, մայրը				.	.	28	» »
ՊԱՊԸ	.	.	.	.	.	65	»
ՏԱՏԸ	.	.	.	.	.	60	»
ԱՐԱՄ	}	Կարոյի դասընկերները	.	.	.	12	»
ԱՇՈՏ			.	.	.	11	»
ԱՍԱՏՈՒՐ	.	.	.	.	.	40	» անգրագետ գյուղացի:

Գյուղական խրճիթ. պապը նստած տրեխներն և սարքում, տա-
տը դուրպա յե գործում, իսկ Թագուշը սանդեղով բուրդ և զգում:

ՏԵՍԻՆ 1.

ՊԱՊԸ. Ես ռւր մնաց մեր գրադետը:

ՏԱՏԸ. Յերեկ ելի խնդիր են տվել:

ԹԱԳՈՒՇ. Ձե, չե, տատի, պատժված կլինի, ա՛յ, կտեսնեք. մինչև իրիկուն առանց ճաշի յեն թողել:

ՊԱՊԸ. Առանց ճաշին, ասենք, վոչինչ, թաք առանց վախճամի* չմնա:

ԹԱԳՈՒՇ. Իսկ ինձ, պապի ջան, կյանքումս չեն պատժել:

ՊԱՊԸ. Ձեզ նման լալկան աղջիկներին ո՞վ պիտի պատժի:

ԹԱԳՈՒՇ. Իսկի յեւ լալկան չեմ, իսկի յեւ չեմ լացել: (Դրսից լսվում է Կարոյի յերգի ձայնը՝ «Հրաժարվենք, ընկերներ, հին որենքներից»):

ՊԱՊԸ. Ձիւ ձենիդ մատաղ. յերգելով ե տուն գալիս:

ՏԱՏԸ. Յերգելուց հավայ ել հո բան չեն սովորեցնում:

ՊԱՊԸ. Սխալվում ես, պառնով, սխալվում. այժմ շատ բան են սովորեցնում. միայն թե աչքերդ բաց, ահանջներդ սուր ու նեցիր. սովորիր՝ ինչքան կարող ես...

ՏԵՍԻՆ 2.

(Ներս է գալիս Կարոն, փառան պայուսակը կողից կախած):

ԹԱԳՈՒՇ. Ե, Է, Է, պատժված, պատժված... առանց ճաշի յեն թողել...

ԿԱՐՈ. Թագուշը հո չեմ, առանց ճաշի մնամ: Դու չգիտե՞ս, վոր մեր դպրոցում առանց ճաշի թողնելու ե պատժելու սովորութիւն չկա:

Ընթերցի:

ՊԱՊԸ. Հը՞, յեկտր, գրադետս:

ՏԱՏԸ. Ինչո՞ւ եսքան ուշացար, Կարո:

ԿԱՐՈ. Յերգի փորձ ունեյինք, տատի:

ՊԱՊԸ. Ի՞նչ նոր յերգ սովորեցիք:

ՏԱՏԸ. Նոր յերգն ել յերեկ թագավորի ու աստծու դեմ ե... ախ, ախ, անպիտաններ...

ԿԱՐՈ. Տատի ջան, տատի, քաղցած եմ. մի կտոր հաց տա՛մ...

ՊԱՊԸ. Հացը ի՞նչ ես անում. յերգիր, յերգիր—կկշտանաս...

ԿԱՐՈ. Հը՛ւր, տատի, տատի ջան...

ՏԱՏԸ. Համբերիր միքիչ. վորտեղ վոր ե մայրիկդ կգա...

ԿԱՐՈ. (Գնում է մթերանոց յեւ յերգում) «Հրաժարվենք, ընկերներ, հին որենքներից...

ՏԱՏԸ. Կարո, ա՛յ Կարո, չե՞ս լսում. սպասիր մինչև մայրիկդ...

ԿԱՐՈ. (Դրսից) Սպասիր, սպասիր. փորս վեց-վեց ե անում ու... (Կա- վե ամանի կտորվելու աղմուկ ե լսվում):

ՏԱՏԸ. (Դեմ օպրտելով գուլպաները) Մեղա՛ քեզ, տեր աստված...

ԹԱԳՈՒՇ. (Դուրս վազելով) Յերեկ ելի բան ջարդեց:

ՊԱՊԸ. (Ուրախ) Հը՛, կշտացար, Կարո:

ՏԱՏԸ. Ես ի՞նչ չարածճի տղա յե, տէր աստված, միշտ ջարդում ե, հա ջարդում:

ԹԱԳՈՒՇ. (Ներս վազելով) Մե՛ծ կաթի կճուճը կտրեց:

ՏԱՏԸ. Են նորը:

ԹԱԳՈՒՇ. Վո՛չ, տատի. ես ուռած փորով կարմիրը. գցեց ու ջարդեց:

ՏԱՏԸ. Տղա հո չե, պատիժ ե, պատիժ:

ԹԱԳՈՒՇ. Նրա հախից միայն մայրիկը կգա:

ԿԱՐՈ. (Ներս մտնելով) Ի՞նչ ե, զոռով ջարդեցի՞, վոր ասում ես, թե մայրիկը հախիցս կգա:

ՏԵՍԻՆ 3.

(Ներս ե գալիս մայրը հոգնած՝ դուլլը ձեռից):

ԹԱԳՈՒՇ. Մայրիկ...

ՄԱՅՐԸ. Ի՞նչ ե:

ԿԱՐՈ. (Փագուճին սպառնում ե բռնեցնով) Սպասիր, ցույց կտամ քեզ:

ԹԱԳՈՒՇ. Մայրիկ...

ՄԱՅՐԸ. Ի՞նչ ես ասում, աղջի ասա, պրծիր:

ԹԱԳՈՒՇ. Կարոն կաթի կարմիր կճուճը ջարդեց:

ՄԱՅՐԸ. Եղպեւ ել վկայում եր սիրտս, ա՛յ գետինը մտած... վերցնեմ ու եզ կտորներով գլուխդ ջարդեմ, բերանըսց...

ՏԵՍԻՒԼ 4.

(Ներս Ե գալիս ձայրը):

ՀԱՅՐԸ. Ի՞նչ Ե պատահել, ի՞նչ աղմուկ Ե:

ՄԱՅՐԸ. Սիրելի զավակիդ աչքերը համբուրիր. շուտով կաթ կթելու աման չենք ունենա:

ՏԱՏԸ. Կարոն են մեծ կճուճը ջարդել Ե:

ՀԱՅՐԸ. Դե, եղ մի կճուճի համար խեղդենք, սպանենք, թե՛ գլուխը թոցենք:

ՏԱՏԸ. Լավ Ես. լավ յերես տուր եղպես և վերջը կտեսնես, թե ինչեր կանի:

ԿԱՐՈ. Հայրիկ, մենք այսօր կոտորակներ սովորեցինք, կոտորակներով խնդիրներ լուծեցինք:

ՀԱՅՐԸ. Կոտորակներով... Ոհո, դա բավականի դժվար Ե, չե՛. Ե, բան հասկացար:

ԿԱՐՈ. Բոլորն արդեն գիտեմ. (Ետապ. Ետապ) հինգ յոթերորդական, յոթ ութերորդական:

ՀԱՅՐԸ. Ապրեն, ապրեն, տղաս, այդպես լավ սովորիր. մեր հույսը դուք եք:

ՊԱՊԸ. Ինչ-վոր վարսեցեղա յե յերգում:

ԿԱՐՈ. Դա հեղափոխական յերգ Ե, պապի:

ՀԱՅՐԸ. Իսկ դու գիտեմ:

ԿԱՐՈ. Այո, գիտեմ:

ՀԱՅՐԸ. Դե, յերգիր, լսեմ:

ՊԱՊԸ. Ի՞նչ յերգ, ի՞նչ բան. Կարոն միայն գլուխը գովել ու կճուճներ ջարդել Ե իմանում: Կարո, ուղղւո՞ւմ Ես քեզ մի խնդիր տամ, լսիր: Դաշտով թռչում եր սագերի յերամ, նրանց հանդիպեց մի սագ և հարցրեց «վերջան եք դուք»:

ԿԱՐՈ. Չե, պապի, այդպես չե: Նա նրանց ասաց՝ «բարե, հարյուր սագեր»:

ՊԱՊԸ. Սպասիր, մի խանգարիր. քու գիտեցածդ գուցե ուրիշ Ե:

ԿԱՐՈ. Չե, պապի ջան, հենց այդ խնդիրն ենք լուծել:

ՏԱՏԸ. Ահա թե ինչ դատարկ-դատարկ բաներ են սովորեցնում:

ՄԱՅՐԸ. Շնորհքով մարդիկ խաչ ու խաչվառով են ման գալիս, իսկ սրանք—ալ-կարմիր դրոշակներով. շատ բան կսովորեք, ինչպես չե, հիմարներ:

ՀԱՅՐԸ. Բաս ի՞նչ եք կամենում, վոր սովորեցնեն:

ՏԱՏԸ. Աղոթքներ կարդա թող, աղոթքներ:

ՀԱՅՐԸ. Ը՛, Ը՛, աղոթքներ, աղոթքներ... գիտենք, գիտենք, աղոթել ենք և շատ ենք աղոթել: Աղոթելով Ե, վոր եսքան յետ ենք մնացել:

ՄԱՅՐԸ. Այ մա՛րդ, դու հենց, կարծես, փոքր լինես, հիմար-հիմար դուրս ես տալիս, իմացողն ել կկարծի, թե դորթ ես ասում:

ՀԱՅՐԸ. Չե, քո արևը վկա, հանաք եմ անում, վո՛նց չե... Տեղդ նստիր, քանի խելքդ բան չի կտրում. ինքդ բանից բխաբար, ուղղւո՞ւմ ես, վոր ուրիշներն ել քեզ պես տգիտ մնան...

ՄԱՅՐԸ. Ոհո, ոհո, փիլիսոփային տեսեք. եղ յե՛րբ ես եղքան զարգացել (գնում Ե):

(Դրսից, պատուհանի տակից լսվում Ե Արամի ձայնը)

ԱՐԱՄ. Կարոն տա՛նն Ե:

ԿԱՐՈ. Տանն Ե, տանը, ներս արի:

ՀԱՅՐԸ. Ո՞վքեր եք:

ԿԱՐՈ. Արամն ու Աշոտն են. ա՛յ, հիմա թե ուղղւո՞ւմ եք, կերպենք:

ՊԱՊԸ. Ինձ ու Թադուշին չե՛ք ընդունի՛ ձեր խմբում:

ՏԵՍԻՒԼ 5.

(Ներս Են գալիս Արամն ու Աստուր):

ՀԱՅՐԸ. Լսիր, Արամ, ի՞նչ նոր յերգ եք սովորել:

ԱՐԱՄ. Կարոն Ե իմանում:

ԱՇՈՏ. Նա յե մեր դպրոցում ամենալավ յերգիչը:

(Տառը դուրս Ե գնում մրերանոց):

ՊԱՊԸ. Սպասիր, պառավ, սպասիր, պատարագ պիտի ասեն:

ՏԱՏԸ. (Դրսից) Լսիր, քավթառ, լսիր: (Բոլորը ծիծաղում են):

ԱՐԱՄ. Լավ ասացիր, պապի. միքանի որ սրանից առաջ ել մենք դպրոցում խմբական յերգեցողություն ունեյինք. հանկարծ դասարանը մտավ Մաթոսինց պառավ տատը և ուղղւո՞ւմ եր գրիչ ու թանաք խնդրի—մեկ ել տեսանք՝ ընկեր Լենինի պատկերի առաջ սկսեց խաչակնքել: Խեղճը կարծեց, թե աստվածային յերգեր ենք յերգում: (Ծիծաղ):

ՊԱՊԸ. Այժմ աստվածային յերգեր չի կարելի, մեղք Ե:

ՏԱՏԸ. (Դրսից) Ե՛, եխ, հիմար քավթառ. ամբողջովին ձերմակել ես ու դեռ մաղաչափ խելք չունես:

ՀԱՅՐԸ. Դե, տղերք, շուտ յերգեք, մի լսենք, թե ինչ եք սովորել:

ԱՇՈՏ. Մենք չգիտենք:

ՊԱՊԸ. Ել ի՞նչ յերգիչներ եք, վոր չգիտեք. թեև յես սպիտակել եմ, բայց ելի ուղղւո՞ւմ եմ ձեզ հետ յերգել: Ե՛յ, պառավ, դու յել եղտեղից ձեն պահիր. ոհ, Փա՛, սո՛ւ...

ՏԱՏԸ. (Դրսից) Ո՛ւհ, անխելք ծերուկ:

ՊԱՊԸ. Քո ասելով դուրս Ե գալիս՝ պառավները հիմար, փոքրերը հիմար. բաս ո՞վ Ե խելոքը:

ՏԵՍԻՆ 6.

(Ներս Ե գալիս Ասատուրը):

ԱՍԱՏՈՒՐ. Ե՛ս ինչ ժողով ե այստեղ: Բա՛րե:

ՊԱՊԸ. Աստու բարձր, բարձր, հազար բարձր. նստիր, Ասատուր, և լսիր. տեսնում ես յերգիչներին, յերգելու յեն:

ԱՍԱՏՈՒՐ. Մի յերգիչ ել յես ունեմ տանը: Առանց յերգի վոտքը չի փոխում: Մի կողմ ա քաշվում իրան համար ինչ-վոր գրքեր ա կարդում: Շատ անգամ գոռում եմ՝ «այ տղա, մի-քիչ ել յեկեղեցական գրքեր կարդա». ով ա լսողը, ասում ա՝ «ինքդ կարդա»:

ԿԱՐՈ. Հարցնելը ամոթ չլինի, ի՞նչ լավ, խելոք բան կա ձեր եղ աստվածային գրքերում:

ԱՍԱՏՈՒՐ. Հո տեսաք: Այ, զրանք եղպես են: Ե՛յ, յերանելի որեր. դպրոցում կրոն եյինք սովորում, տոն որերին յեկեղեցի գնում. իսկ հիմի—յեկեղեցում վոչ մի աշակերտի չես գտնի: Մի անգամ վախճամի յինք նստած, մեկ ել, հանկարծ՝ յեր-կինքը գոռաց: Դե, յես խաչակնքեցի յերեսս, տեսնեմ՝ Մի-քեկ սկսեց ծիծաղել: Ասում ա՝ «ինչացու յես խաչակըն-քում, հայրիկ»: «Ի՞նչպես թե ինչացու. չե՞ վոր Յեղիա մար-դարեն վոսկեգոծ կառքով զբոսանքի դուրս յեկավ, ու դրա-նից յերկինքը գոռաց»: «Ի՞նչ Յեղիա, ի՞նչ բան. սուտ ա, ասում ա, եղ բոլորը. դա, ասում ա, լեքտրական կայծակն ա խաղում, ողբ իրար ա դարնվում և շփումից աղմկում»: Արենս գլուխս խփեց, վերցրի դալն ու մին տվի ճակա-տին վո՛ր, աչքերից կայծակներ թափվեց. տեսնեմ՝ ցավից գոռաց. ասեցի՝ «բա սմ ով գոռաց»: Բայց նա, անպիտանը, ենպես ել պինդ մնաց իր համոզմունքի վրա:

ՏԵՍԻՆ 7.

ՏԱՏԸ. (Ներս Ե գալիս) Ե՛, Է՛, հիմա վոչնչի չեն հավատում: Մի բան կասես—ծիծաղում են. տերտերներ լրա ծիծաղում են, սրբերի ու պատկերների վրա ծիծաղում են:

ՊԱՊԸ. Ե՛հ, յես բան չեմ խոսում, լուռ եմ:

ԱՍԱՏՈՒՐ. Յեկեղեցական պատկերների վրա ծիծաղելը դեռ վո-չինչ. աստված չեն հավատում. ասում են՝ աստված չկա—հոգի յա միայն, միտք ա, ուրիշ վոչինչ:

ՏԵՍԻՆ 8.

ՄԱՅՐԸ. (Ներս Ե գալիս) Բարե, Ասատուր յեղբայր: Թագուշ, գնա Սրբուհուց մաղը բեր:

ԹԱԴՈՒՇ. Մայրիկ, հիմա չեմ ուզում:

ՄԱՅՐԸ. Ձեմ ուզումս վորն ե. գնա, գնա, շուտ. հերիք հեքիաթներ լսես. ձեր հայրը փոքրերիցդ բեթար ե. վաղիր, շուտ:

ԹԱԴՈՒՇ. Հա, վաղիր... ա՛յ, թող Կարոն գնա:

ՄԱՅՐԸ. (Բարկացկոտ) Դեռ շատ պիտի խոսես:

(Թագուցը չկամությամբ գնում ե):

ՏԱՏԸ. Հա, Էն եր—սկսեցի ոճի մասին պատմել, Էն վոր գիշերով թռել եր,—իսկ տղաս ու թոռս ծիծաղեցին վրաս: Դա, ա-սում են, ասողն ե ընկել: Իսկի վոչինչ խոսել չի լինում. տեղոց-տեղ բերանդ փակում են:

ԱՍԱՏՈՒՐ. Ասողը... Իհարկե, հիմարներ ենք, վոչինչ չգիտենք: Լավ—ասենք թե, որինակի համար, յիթե ասողը վերելից ընկներ, մեղ բոլորիս հստեղ պաստեղ կշինեք, հը... (Փոփոկները ծիծաղում են):

ՀԱՅՐԸ. Խելքի տոպրակ ես, Ասատուր, իսկական խելքի տոպրակ. քեզանից կարելի յե շատ բան սովորել:

ՄԱՅՐԸ. Դու քո կյանքում ինչի՞ն ես հավատացել, վոր ասողին ու ասածուն հավատաս:

ՀԱՅՐԸ. Հերիք ե ինչքան հավատացի:

ՊԱՊԸ. Բա, յես ել ասում եմ, ես ինչու յեն ասողերը պակասել յերկնքում... դու մի ասա, բոլորը ցած են թափվել:

ՀԱՅՐԸ. Մեղ դարեր շարունակ այդ հավատով են կերակրել. սուրբ Դիրքը ինչ վոր ասաց, Էն ե, հավատա՛, շարա՛:

ԱՐԱՄ. (Դիմելով Կարոյի հորը) Գեորգ քեռի, մասունքների մասին եր գրած լրագրում—կարդացի՞ք:

ՀԱՅՐԸ. Այո՛, կարդացի:

ԱՇՈՏ. Ակումբից յես ել վերցրի լրագրի այդ համարը, տուն տա-րա կարդալու. իսկ մայրս, հենց վոր լսեց մասունքների մասին ե, լրագիրը ձեռքիցս խեց ու պատռեց... Դա, ասում ե, սատանի գրած ե:

ԱՍԱՏՈՒՐ. Ե՛խ, Աշոտ, Աշոտ, դու դեռ շատ պստիկ ես կրոնքը ծաղ-րելու համար...

ԿԱՐՈ. Պատիկ ե, բայց ճստիկ ե:

ՏԱՏԸ. Թուհ, անամոթներ, աշխիղճներ:

ՊԱՊԸ. Դե, լավ, լավ, պառավ, մեր ի՞նչ գործն ե. ով ե իմանում. գուցե մենք քեզ հետ մի աչքով ենք նայում:

(Լսվում ե զանգերի դողնցյուն: Տատր յեվ մայրը խաբա-կեցում են):

ՀԱՅՐԸ. Գնա՛, մայրիկ, յեկեղեցի՛ գնա:

ՊԱՊԸ. Գնա՛, պառավ, մեր փոխարեն ել միքիչ աղոթիր...

ՏԱՏԸ. Իսկ դուք յերգեր յերգեցեք... (Գնում ե)։

ԿԱՐՈ. (Յետեկից) Տատի, տատի, իսկ ո՞՞՞ր շատ մեծ ե՞ր։

ՄԱՅՐԸ. (Բռնելով վզից, խփում ե յեվ ականցից քառույթ) Այ թե
ինչքան եր։

ՀԱՅՐԸ. (Խփելով Կարոյի մոր ձեռքից) Դե, դե, ձեռք մի տար։

ՄԱՅՐԸ. Յերես տուր, եղպես յերես տուր, վաղը-մյուս որ քեզ ել
մարդու տեղ չի դնելու։

ԱՍԱՏՈՒՐ. Իսկապես ժողովուրդը շատ մեծ աղատություն ա վայե-
լում, յեթե միայն կարգ-կանոն լիներ։

ՀԱՅՐԸ. Մեծացեք, տղերք ջան, ձեր խելքին մատաղ. մի հավա-
տաք մեր ազիտությանը։ Ավելի ուշադրություն դարձրեք
ձեր ուսումին, դասերին. գիրքը շատ բան կսովորեցնի։
Մենք, վոր ապրում ենք, ինչի՞ յե նման մեր կյանքը—մու-
թը, խավար, ներքնահարկ. մեզ չեն տվել առաջնորդող ճրագ,
վոր ճանապարհը տեսնենք. իսկ դուք, ձեռք բերեք այդ
ճրագը, քանի ժամանակ ունեք։ Դպրոցն ե, վոր պիտի տա
ձեզ գիտություն. գիտվեցեք գիտությամբ, վորովհետև շու-
տով հերթը կհասնի ձեզ, յերբ ամեն մեկդ գործի գլուխ
պիտի անցնեք։

ԹԱԳՈՒՇ. (Ներս վագելով) Սրբունենք մաղ չունեն, մայրիկ։

ՄԱՅՐԸ. Ու՞ր են կորցրել։

ԹԱԳՈՒՇ. Չգիտեմ։

ՄԱՅՐԸ. Չգիտեմ, չգիտեմ... Զխկվել են, ինչ ե... (Գնում ե դուրս)։

ՀԱՅՐԸ. Արամ, դե սկսիր նոր հեղափոխական յերգը։

ԱՐԱՄ. Թող Կարոն սկսի։

ԱՇՈՏ. Դե, յերգենք, Կարո։

ՊԱՊԸ. Թագուշին ել ընդունեցեք. նա զիլ ձայն ունի...

ԹԱԳՈՒՇ. Ինչե՞ս յես ծիծաղում վրաս, պապի։

ՀԱՅՐԸ. Լավ, լավ, Թագուշ, դուն ել կսովորես։ Դե, սկսեցեք, քանի
Ասատուրը այստեղ ե։

(Տղերք կիսաօրջան են կազմում յեվ ֆիգուրա իրար հետ)։

ԿԱՐՈ. Լսիր, հայրիկ։

(Յերգում են «Ինտերնացիոնալ»)

Յելիր, ում կյանքը անիծել ե,

ով ճորտ ե, մերկ ե և ստրուկ.

յիռում ե մեր միտքը վրդոված

և մեզ տանում դեպ մահ ու մարտ։

(Կամաց յերգելով դուրս են գնում խրհիթից. բեմի յետեվում
յերգը շարունակվում ե)։

ԱՍԱՏՈՒՐ. Տեսեք, տեսեք խնքոտներին, ինչ զիլ ձեներ ունեն։

ՊԱՊԸ. Մենք, Ասատուր, մեր ժամանակը աղբիլ, պրծել ենք։ Այո, մեր
տեղը այժմ բանջարանոցն ե, ճնճողներ փախցնելը...

ՀԱՅՐԸ. (Վոգելովում) «Յիռում ե մեր միտքը վրդոված»—հասկանում
ես, Ասատուր։

ԱՍԱՏՈՒՐ. Ենպես, իբր թե հասկանալի յա, բայց բացատրել չեմ
կարող։

ՀԱՅՐԸ. Այ, հենց մեր գծախտությունն ել եդ ե, վոր պատմել
չենք կարող։ «Վոշ վոք չի տա մեզ աղատություն»։ Այսպիսի
խոսքերը հասկանալ, ըմբռնել ե պետք։

(Լուրջյուն. յերգը շարունակվում ե)։

ՊԱՊԸ. Կյանքի ծաղիկներ, ծեք, ծաղիկեք, զորացեք...

(ՎԱՐԱԳՈՒՅՐ)

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՇԱՐԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄՈՎՍԵՍ	60	տառեկան գյուղացի
ՍԱՐՈ—Մովսեսի մեծ տղան	35	» գյուղաբնակից
ՍՏԵՓԱՆ— » փոքր »	17	» պատանի բղթակից
ԼԵՎՈՆ—Սաֆոյի տղան	13	»
ՍՈՍ—Լեվոնի ընկերը	13	»
ԲԱԼՈ	50	» գյուղի վաճառու
ԱՆԱԽՍՍ	65	» պառավ ֆալցի
ՍԻՐՈՒՇ—Անախասի վորդեգիր աղջիկը	13	»
ԴԱՏԱԽԱԶ		
ԳՅՈՒՂԱՑԻ		
ՅԵՐԿՈՒ ՄԻԼԻՑԻՈՆՆԵՐ		

Բեմը ներկայացնում է փոքրիկ հրապարակ—Մովսեսի խրճիթի առաջ: Սոսը նստած է մի քարի վրա և մեկամաղձոտ յեղանակով յերգում է ժողովրդական մի յերգ:

Ա. ՊԱՏԿԵՐ

ՏԵՍԻԼ 1.

ՍՈՍ. (Յերգում ե) Յայլուխս կորավ ձեր դուռը,
սրածես չի դուրս գա մրմուռը.
ով գտել ե՞ թող բերե տա, յար, յարո ջան,
սիրուն աղջիկ, իմ յայլուխը:

Ո՛ֆ, ես ի՜նչ տխուր ե. վոչ կարգին ուրախություն, վոչ ել գործ:
Ե՛յ, ի՜նչ լավ եր ամառը. քաղաքից յեկել եյին ֆարրիկա-
ներում սովորող տղերքը, վրաններ եյին դարկել ու ենպես
գեղեցիկ, մաքուր: Մեզ հետ բարեկամացան. նրանք գալիս
եյին մեզ մոտ, մենք գնում եյինք նրանց մոտ—յերգեր ու
խաղեր եյինք սովորում, լավ-լավ պատմություններ եյինք
լսում: Ենպես ուրախ եր անցնում ժամանակը, ենպէս ու-
րախ. իսկ ա՛յժմ... տխուր, տրտմում...

(Շարունակում ե յերկաբացեցելով յերգել նույն յերգը):

ՏԵՍԻԼ 2.

ԼԵՎՈՆ. (Դուրս ե գալիս խրճիթից) Սոս, եղ ինչ տխուր ես յերգում, տո՛ւ.
կարծես մեռել ես թաղում:

ՍՈՍ. Տխուր ե, Լեոն, տխուր:

ԼԵՎՈՆ. Ա՛յ ախմախ, բան ու գործ չունես, վոր նստել եղպիսի պա-
լապ յերգեր ես յերգում:

ՍՈՍ. Ի՞նչ գործ, վո՛րտեղից...

ԼԵՎՈՆ. Վո՛նց թե ինչ գործ. ցանկություն յեթե լինի, գործ կգտնվի.
բա ամառս պիտիներնրի զրույցներն իդուր եյինք լսում,
թե՛ նրանց ասածները կատարելու յենք մեր գյուղում: Այ,

որինակի համար, մեր խրճիթ-ընթերցարանը — քթներին
տակն ե. խնամքի կարոտ ե. պետք ե մաքրել, զարդարել,
կարգի բերել: Այնտեղ կարելի յի կարդալ թե՛ ժուրնալներ,
թե՛ զրբեր—վո՛րքան քեֆդ տա:

ՍՈՍ. Ճիշտ ես ասում, Լեոն, բայց մենք միայն յերկուսով ենք—ի՞նչ
կարող ենք անել:

ԼԵՎՈՆ. Այժմ յերկուսով ենք, բայց շուտով կշատանանք:

ՍՈՍ. Այ, յեթե կոլեկտիվ ունենայինք, նրանց պես...

ԼԵՎՈՆ. Իսկ դու պատկում կգրվե՞ս:

ՍՈՍ. Յէս, թեկուզ հենց ես ընդեյիս, պատրաստ եմ:

ԼԵՎՈՆ. Դեհ, լսիր, Սոս, միայն թե լեզուդ քեզ պահիր: (Ծածուկ) Շու-
տով կոլեկտիվ կունենանք:

ՍՈՍ. Ա՛յ հրաշալի բան... Իսկ ո՞վ ե կազմակերպելու:

ԼԵՎՈՆ. Յերևի Ստեփանը—բիձաս. քաղաքումն են ասել. չե՞ վոր նա
կոմսոմոլ ե...

ՍՈՍ. Լեոն ջան, Լեոն, հոգուդ մտնեմ... հո սուս: չե՞ս ասում...

ԼԵՎՈՆ. Ինչո՞ւ պիտի սուտ ասեմ:

ՍՈՍ. Յերգվիր:

ԼԵՎՈՆ. Այ հիմար. ախր յես աստված չեմ հավատում:

ՍՈՍ. Ի՞նչպես թե չես հավատում:

ԼԵՎՈՆ. Հենց ենպես, ելի. չեմ հավատում:

ՍՈՍ. Բա սատանի՞ն ել չես հավատում:

ԼԵՎՈՆ. Այո, սատանին նույնպես չեմ հավատում:

ՍՈՍ. Բա Անախասը ասում եր, թե սատանա կա:

ԼԵՎՈՆ. Եղ քաղթառը բոլորիդ խաբում ե, խաբում:

ՍՈՍ. Խաբում ե... Լեոն, ինչ սարսափելի կերպարանք ունի նա...

ԼԵՎՈՆ. Իսկ ինչ համար հեչ ել սարսափելի չե...

ՄՈՎՍԵՍ. (Բեմի յետեվից) Լեոն, ա՛յ Լեոն, ո՞ւր ես կորել:

ԼԵՎՈՆ. Ի՞նչ ե, պապի, հստեղ եմ:

ՏԵՍԻԼ 3.

ՄՈՎՍԵՍ. (Ներս ե գալիս) Տառդ եր քեզ փնտռում, գաթա յի թխել.
գնա մի համը տես:

ԼԵՎՈՆ. Չեմ ուզում, պապի:

ՄՈՎՍԵՍ. (Նստելով) Դե, չես ուզում, դու յես իմանում:

ՍՈՍ. Բարե քեզ, Մովսես պապի:

ՄՈՎՍԵՍ. Ա՛ս, բարե, ճուտիկ, բարե. եղ ինչի՞ մասին եյիք խոսում:

ԼԵՎՈՆ. Պապի, ուզում ենք նոր ձևով ապրենք:

ՄՈՎՍԵՍ. Այսինքն, եղ վո՛րնոր ձևի մասին ե խոսքդ. ինչե՞ր եք հնա-
րում:

Լեւոն. Շատ, շատ բան... այ, որինակ, մեր գեղին տրակտորն Ե պետք:
ՄՈՎՍԵՍ. Տրակտոր...:

Լեւոն. Հա, պապի, տրակտոր-մաշինա, հողը վարելու համար. վարու-
ցանքսի հին ձեռն պետք Ե հիմնովին փոխենք, վրո սովից
ու աղքատությունից ազատվենք...

ՄՈՎՍԵՍ. Ի՞նչ է, ձեր պապերի ապրուստը չեք հավանում:

Լեւոն. Ձե, պապի, չենք հավանում. Ե ձեզ ել խորհուրդ չենք տա,
վրո առաջվա նման ապրենք...

ՄՈՎՍԵՍ. Ե՛հ, ի՞նչ արած, Լեւոն ջան, իմ մի վոտս գերեզմանումն է.
ինչպես ապրել եմ, եսպես ել կշարունակեմ. յես տեսել եմ
արդոն ու յեռադաշտյան ցանքսի ձեռն Ե ուրիշ նորություն-
ների գլուխ չունեմ:

Լեւոն. Պապի, շատ վատ կանես, վրո եղպես շարունակես:

ՄՈՎՍԵՍ. Լավ կանեմ, թե վատ—դա իմ գիտենալիքն է, դրանից հո
քս գլուխը չի ցավելու:

Լեւոն. Ի՞նչպես թե չի ցավելու... Եղպիսով հողին իսկի խնամք չեք
անում, յեռադաշտյան ձեռն հողը հալումաշ Ե անում. ա՛յ,
ուրիշ բան է, յեթե բաղմադաշտյան ձեռն մտցնեք:

ՄՈՎՍԵՍ. Գիտես ինչ, Լեւոն, եղ տեսակ բաները հե՛չ ել քս գործը չի:

Լեւոն. Ի՞նչպես թե իմ գործը չի. ձեզանից հետո չե՞ վրո յես եմ
աշխատելու եղ հողի վրա. հողը կշարճարեք, ուժասպառ կա-
նեք ու ել...

ՄՈՎՍԵՍ. Ինձանից հետո... Ի՞նչ է, պատրաստվում ես արդեն ինձ
թողես, ա՛յ դու չարածձի...

Լեւոն. (Փաթաթվելով պապին) Ձե, պապի ջան, չե, ապրիք, շատ
ապրիր. միայն մեզ մի մոռանար, ձեր բոլոր մեղքերը մենք
ենք քավելու:

(Սափոյի ձայնը բեմի յետեվից՝ «Լեւոն, Լեւոն, ա՛ Լեւոն, շոտ,
դարպասները բաց արա»)

Լեւոն. Հայրս ու բիձաս քաղաքից յեկան. գնանք, Սոս: (Վազում են
դուրս. Մովսեսը բարձրացնում է տեղից յեվ ուզում է գնալ.
ճրան կանգնեցնում է Անաստը):

ՏԵՍԻՒ 4.

ՄՈՎՍԵՍ. (Մի կողմ) Այ վոտքդ կոտրվեր հա... չեմ սիրում ես սա-
տանին:

ԱՆԱՆԱՍ. Բարի աջողում, Մոսես քեռի:

ՄՈՎՍԵՍ. Ասածու բարին, Անաստա բա՛ջի, շտապում եմ, տղերքս յե-
կան, գնամ...

ԱՆԱՆԱՍ. Շտապելու ինչ բան կա. տղադ հո չի փախչի. հալա մի
նստիր...

ՄՈՎՍԵՍ. Ե՛, Ե՛, ախր ժամանա՛լը չի, Անաստա, ձիերին գառի պե-
տի տամ...

ԱՆԱՆԱՍ. Ի՞նչ է, տղեդ աղա յե դասել. ինքը չի՞ կարա գառի տա. հա
չի կարում—թող փոքրը տա...

ՄՈՎՍԵՍ. Նրանք զբաղված են, Անաստա բա՛ջի, զբաղված. դե՛յ, առա-
վաից ուշ գիշեր (կսկիկով յեվ ուրախ սցսծ, վրո կարող է
սրտում կուտակվածը հայտնել) մտավոր գործերով են զբաղ-
վում, Անաստա, մտավոր...

ԱՆԱՆԱՍ. (Կեղծ գարմացկոտ) Մտավոր... սուրբ գրքեր են կարդում,
թե ճգնում են...

ՄՈՎՍԵՍ. Ե՛յ, Անաստա, հե՛չ բան չեմ հասկանում, շո՛տ եմ ծերացել:
(Յաճր) Արգելիկ են վրո ուրիշին բան ասեմ... զբում են,
հա զբում են:

ԱՆԱՆԱՍ. Գրում ես...

ՄՈՎՍԵՍ. Սաքոն ել, Ստեփանն ել զբում են հա զբում, եղպիսի ճըռ-
ճըռոց են գցել, վրո ել ինչ ասեմ... թա. դ՛՛ Ե՛ն ճրոտում վրո
հաշիվ չկա...

ԱՆԱՆԱՍ. Եղքան շատ եղ ի՞նչ են զբում, Մոսես քեռի:

ՄՈՎՍԵՍ. Ինչ վրո գյուղթղթակից են ասում, բայց գլուխս բան չի
մտնում: (Բեմի յետեվից Սափոյի ձայնը՝ «Հայրիկ, ա՛ հայրիկ»):
Պետք է գնամ, Անաստա ջան. առանց են ել ավել-պակաս
դուրս տվի: (Գնում է):

ԱՆԱՆԱՍ. (Մեկակ) Գյուղթղթակիցներ... զբում եք... ու, անդգամ-
ներ... յես ձեզ գրել ցույց կտամ... անաստվածներ... (սպառ-
նում է ձեռնափայտով յեվ գնում):

ՏԵՍԻՒ 5.

(Ներս են գալիս Սափոն, Ստեփանը յեվ Լեվոնը)

ՍԱՔՈ. Ահա թե ինչպիսի բաներ, Լեւոնիկա:

Լեւոն. Դու մի են ասա, հայրիկ ջան, կարդալու բան բերել ես:

ՍԱՔՈ. Վոնց չե. բերել եմ, բերել՝ ել «Պատկոմ», ել «Պիոներ», «Կար-
միր ծիլեր», «Ավանգարդ»...

Լեւոն. Դե տուր տեսնեմ:

ՍՏԵՓԱՆ. Ո՛ւր ես շտապում, Լեւոն. կարդալը չի փախչի, եստեղ ավե-
լի կարեոր գործ կա:

ՍԱՔՈ. Լեւոնիկա, դու հո ճանաչում ես են հաստավիդ Բալոյին, վրո
կուպերատիվումն Ե ծառայում:

ԼԵՎՈՆ. Են կուլակը... գիտեմ, գիտեմ, ճանաչում եմ:
 ՍԱՔՈ. Ուրեմն լսիր. մենք նրա դեմ պայքար ենք սկսել:
 ԼԵՎՈՆ. Վաղուց եր պետք... Լսի, իսկ յես ինչ կարող եմ անել:
 ՍՏԵՓԱՆ. Միանգամից եղ հաստափորի հախից գալը դժվար գործ է:
 ԼԵՎՈՆ. Իհարկե, պարզ է, վոր պետք է զգուշ, ծածուկ գործել:
 ՍԱՔՈ. Այ, ապրե՛ս, շատ շուտ գլխի ընկար: Պետք է խրճիթ-ընթեր-
 ցարանքում զրույցները կանոնավորել, փոքրիկ ներկայացում
 կազմակերպել, գրականութուն ձևեր բերել:
 ԼԵՎՈՆ. Իսկ ինչ է լինելու իմ կատարելիք գործը:
 ՍՏԵՓԱՆ. Գլխավոր գործը քեզ է ընկնելու. պատկոմական կոլեկտիվ
 ենք կազմակերպելու...
 ԼԵՎՈՆ. Չե՛, ճիշտ...
 ՍՏԵՓԱՆ. Ինչո՞ւ չե՛... կոլեկտիվի հրահանգիչը ժամանակավորապես
 յես կլինեմ, իսկ դու կոգնես ինձ:
 ՍԱՔՈ. Յեվ կոլեկտիվը մեզ շատ կոգնի: Խրճիթ-ընթերցարանը կար-
 գի կբերեք, գյուղացիների համար լրագիրներ, գրքույկներ
 կկարդաք, ընտանիքներում առողջապահության և մաքրու-
 թյան մասին կխոսեք, մեծերի ներկայացուցիչներին կոգնեք:
 ԼԵՎՈՆ. Մենք ինքներս ել ներկայացուցիչներ կսարքենք, ենպես չի՞,
 Ստեփան բիձա...
 ՍՏԵՓԱՆ. (Ժպտալով) Այժմ, ընկեր Ստեփան:
 ԼԵՎՈՆ. Ներիր, ընկեր: Դե, լավ, ընկեր. ուրեմն յես գնամ և հավա-
 քեմ տղերանցը, վոր...
 ՍՏԵՓԱՆ. Ի՞նչ է, ուղում ես ես բոլորը մեկե՞ն վերջացնես:
 ՍԱՔՈ. Շատ ես շտապում, Լեոնիկա:
 ԼԵՎՈՆ. Յերկաթը պետք է տաք-տաք ծեծել. գնանք, բիձա. (նայում է
 Ստեփանին յեվ ծիծաղում) ներողություն, ընկեր Ստեփան,
 գնանք: (Բոլորը գնում են):

(Վարագույր)

Բ. ՊԱՏԿԵՐ

ՏԵՍԻՆ 1.

(Նույն տեսարանը: Յերեկո յե. Սաֆոյի սեյյակի պատուհանից
 լույս է սփռվում. պատուհաններից մեկում նեմարվում են
 խոնարհեցած գլուխների ստվերներ. կամացուկ ներս է
 գալիս Անախար):

ԱՆԱԽԱՍ. (Կանգնում է կիսաձայն) Ես կողմը արի, Բալո, ես կողմը,

(Բալոն յերեվում է): Տե՛ս, աչքերդ բաց արա և լավ նայիր,
 այ, Լեոնեղ (ցույց է տալիս պատուհանը):
 ԲԱԼՈ. (Զգուշությամբ վտտեքի մատների վրա մոտենում է պատուհա-
 նին) Գրում եմ... Ըհը, շան լակտաներ (բառացիները սեղ-
 մում է յեվ սպառնում):
 ԱՆԱԽԱՍ. (Յետ պահելով նրան) Սու՛սս, գժվե՛լ ես, ինչ է. պետք է
 լավ մտածել, Բալո:
 ԲԱԼՈ. Մտածել... ես սհաթիս կխեղդեյի շուն-շան վորդուն...
 ԱՆԱԽԱՍ. Պետք է լավ չափել ու ձևել: (Յածր ձայնով) Ես գիշեր
 նրանք քաղաք են գնում:
 ԲԱԼՈ. Դժբ էս ասում:
 ԱՆԱԽԱՍ. Լսվ գիտեմ. նամակներն ել են հետները տանում: Հիմար
 մի լինիր, Բալո: Եստեղ հիմի տեղը չի, բայց ճանապարհին
 կարող ես...
 ԲԱԼՈ. Մեն-մենակ վո՛նց կկարողանամ:
 ԱՆԱԽԱՍ. Ասաված ուժ ու զվաթ է տվել, չի խնայել...
 ԲԱԼՈ. Ախր նրանք յերկուսով են...
 ԱՆԱԽԱՍ. Կացնով գնա, կացնով, վոր մեկեն վերջ տաս:
 ԲԱԼՈ. Ո՛ւ, ո՛ւ, սարսափելի յե...
 ԱՆԱԽԱՍ. Բա կոռպերատիվից վոնգվիլդ սարսափելի չե՞. բանտերում
 փոխել լավ է...
 ԲԱԼՈ. (Ատամների կրճտոցով) Ը՛, Ը՛, Ը՛...
 ԱՆԱԽԱՍ. Բժա, ի՞նչ էյիր կարծում: Մի դանդաղիր, Բալո. հավաքիր
 ինքդ քեզ ու...
 ԲԱԼՈ. (Մտածելուց հետո, վեռակաճորեն) Գնանք, գնանք, Անախաս.
 արաղ ունե՛ս, թե չե:
 ԱՆԱԽԱՍ. Վո՛նց չե. քեզ համար կճարվի: (Դնում են): Միայն թե կա-
 ցինը չմոռանաս. կացնով պետք է գործ տեսնել... (Յերկուն
 ել գնում են):

ՏԵՍԻՆ 2.

(Խրճիթից բեմ են դուրս գալիս Սաֆոն, Ստեփանը, Լեվոնը,
 Սաֆոն ու Ստեփանը նամպորդակա՛ն օտերով):

ԼԵՎՈՆ. Մութն է, հայրիկ. աչքը աչքին չի յերևում: Սպասի՛ք, լուսը
 ծագեր՝ լուսով ճանապարհվեյիք:

ՍԱՔՈ. Անկարելի յե, տղաս. գործը պահանջում է շտապել, և մենք
 պարտավոր ենք այժմ ևեթ մեկնել: (Ստեփանին) Գրած
 թղթակցությունդ մոտդ է:

ՍՏԵՓԱՆ. Այո, մոտս է:

Լեւոն. Հայրիկ, յետի խնդիր ունեմ:

ՍԱՔՈ. Ասա, լսում եմ, պատկոմա:

Լեւոն. (Անհամարձակ) Ինչ պատկոմական թղթակից կըրնա քաղաքում:

ՍԱՔՈ. Ինչպե՞ս, ինչպե՞ս...

Լեւոն. Հենց ենպես՝ դու գյուղթղթակից, բիձան...

ՍՏԵՓԱՆ. (Բնդհատելով) Բնկեր...

Լեւոն. (Ժպտեքես) Թո՛ւհ, ընկեր Ստեփանը յերիտթղթակից, յետ ել պիտենք թղթակից... «Ավանդուրդ» թերթի համարները մեկուսի կարդացի. այնտեղ մանրամասնորեն բացատրված է, թե ինչի մասին ինչպես պետք է գրել...

ՍԱՔՈ. Յենթադրենք գրեցի, հետո՞. չե՞ վոր դու դեռ վոչինչ չես գրել:

Լեւոն. (Հանելով գրպանից թուղթը) Ահա...

ՍԱՔՈ. (Բաց անելով յեվ մոտեցնելով պատուհանին, կարդում է)... Կորչեն կուլակները, վորոնք նստած են կոռպերատիվում (հիացմունքով նայում է Լեւոնի վրա): Այ, ապրես, ապրես, աղաս. ուրեմն մենք շուտով կարգին փոխանորդներ կունենանք:

Լեւոն. (Պատկուհական պատիվ տալով) Միշտ պատրաստ եմք:

ՍՏԵՓԱՆ. Ահա թե ինչպիսի սերունդ է դաստիարակվում:

Լեւոն. Այո, ընկեր բիձա, մենք միշտ պատրաստ ենք բանվորա գյուղացիական գործի համար ձեզ փոխարինելու: (Պառկա. գնում են յերեքն ել. բեմի յետեւում ձիերի յեվ կռֆի անիվների աղմուկ):

ՏԵՍԻԼ 3.

(Լեւոնը վերադառնում է մեռակ. բիչ անց ներս է գալիս Սիրուհի):

Լեւոն. Գնացին... Ձե, ինչ ուզում ե լինի, պատկոմ եմ դառնալու: ՍԻՐՈՒՇ. (Սուսուփում) Լեոն, ա՛ Լեոն...

Լեւոն. Ես վճռեցի, Սիրուհի, հսքան ուշ. թե՛ Անախասն է դնգստել, ու փախել ես. ասա՛, հը՞... Ի՞նչ է պատահել քեզ, ինչո՞ւ յես հզպես գունատ...

ՍԻՐՈՒՇ. Յես... յես... Լեոն, սարսափում եմ:

Լեւոն. Ի՞նչ է պատահել...

ՍԻՐՈՒՇ. Հայրդ գնաց, չե՞...

Լեւոն. Այո, հենց այս բույսին. հետո ինչ:

ՍԻՐՈՒՇ. Ստեփան բիձադ ել գնաց:

Լեւոն. Այո, այո, յերկուսը միասին: Բանը ինչո՞ւն է, Սիրուհի: (Նայում է շեռտակի Սիրուհի դեմքին յեվ սարսափած բռնում է նրա ձեռքը) Յես սարսափում եմ, Սիրուհի. ասա, ի՞նչ զիտես, շո՛ւտ, շո՛ւտ ասա...

ՍԻՐՈՒՇ. Նա... նա... կսպանի նրանց, կսպանի:

Լեւոն. Ի՞նչ... ով, ո՞ւմ կսպանի:

ՍԻՐՈՒՇ. Բալոն, Բալոն կսպանի...

Լեւոն. Սիրուհի, թե հոգիդ կսիրես, կարգին խոսիր, ի՞նչ ե պատահել:

ՍԻՐՈՒՇ. Դե, լսիր. քիչ առաջ Բալոն Անախասի մոտն եր. արագ եր կոնծում: Հետո նրանք փախացին՝ «պետք է սպանել, պետք է սպանել» ասում եր Անախասը: Հետո Բալոն կացինը վերջըրեց ու վազեցավ գնաց:

Լեւոն. Սո՛ւտ ես ասում, Սիրուհի:

ՍԻՐՈՒՇ. Ձե, Լեոն, չե, ճիշտ եմ ասում. ա՛յ, քուռանամ, թե...

Լեւոն. Շատ ժամանակ ե նրա գնալը:

ՍԻՐՈՒՇ. Մի ժամ կլինի: Շուտ եյի ուզում դալ ձեզ մոտ, բայց չկարողացա պառավից աղափել: Ի՞նչ անենք, Լեոն. հորդ ել, քեռուդ ել կսպանի:

Լեւոն. Մտիր մեր տուն, Սիրուհի. բայց տատիս ու պապիս բան չասես: Ասա, վոր Անախասից ես փախել ասա, վոր շատ ե ծեծում: Իսկ յես ոգնուլթյան կ'աանեմ...

(Ի՛նչու ե վազում. Սիրուհի մտնում է խրհիթ):

ՏԵՍԻԼ 4.

(Յերկար պառկա: Հեռվից գուռնայի նվագ է լսվում: Հեռվից նեկ ներս է վազում մի գյուղացի, մոտենում է խրհիթին յեվ քրքրիկացնում):

ԳՅՈՒՂԱՑԻ. Մովսես քեռի, ա՛ Մովսես քեռի...

ՄՈՎՍԵՍ. (Ներսից) Ե՛ս ի՞նչ թխթխեց ե ես ուշ ժամին. կես գիշերն անց ե...

ԳՅՈՒՂԱՑԻ. Շո՛ւտ, շո՛ւտ, դուրս արի, քեռի: Սաքոյին...

ՄՈՎՍԵՍ. (Շրխեցող բաց է անում պատուհանը) Ի՞նչ, ի՞նչ ե պատահել Սաքոյիս...

ԳՅՈՒՂԱՑԻ. Սպանեցին, սպանեցին Սաքոյին ել, Ստեփանին ել:
(Վարագույր)

Գ. ՊԱՏԿԵՐ

ՏԵՍԻԼ 1.

(Նույն տեսարանը. յերկու օաբսք անց: Սուր նստած է Բալոն վրա յեվ յերգում է):

ՍՈՍ.

«Մենք պատկոմ ենք սրտոտ ու քաջ—

մենք պատրաստ ենք կռվելու.

դե, յեկեք, յեկեք միասին

մեկ ձախ, մեկ աջ, դեպ առաջ... Լեոն, ա՛ Լեոն:

Լեւոն. (Ներսիս) Ի՞նչ է, Սոս:

ՍՈՍ. Շուտ կարծես:

Լեւոն. (Դուրս ե գալիս պատկոմական շորերով յեկ փողկապով) Ահա, յեկա:

ՍՈՍ. Ոհո, սրան տեսե՛ք, թե վո՞նց է զուգվել, զարդարվել:

Լեւոն. Այսպիսի շորեր բոլորիդ համար ե ստացված, արխային կաց:

ՍՈՍ. Դո՞ւրթ, եղ վաճառեցի...

Լեւոն. Մեր շեֆն է ընծայել:

ՍՈՍ. Դե, այժմ ասա, ի՞նչպես է հորդ առողջությունը:

Լեւոն. Յերեկ քաղաքումս եյի, գնացի հիվանդանոց: Վոչինչ—առողջանում եմ հայրս ել, բիձաս ել:

ՍՈՍ. Ուրեմն հարվածը ուժեղ չի յեղել:

Լեւոն. Բիձայիս վերքը ավելի ծանր է, իսկ հայրիկինը թեթեւ է:

ՍՈՍ. Իսկ մենք կարծում եյինք, թե արդեն մեռած կլինեն:

Լեւոն. Յես ել եյի համոզված, թե կացնի ուժեղ հարվածները վերքերին չեն գիմանա, բայց, վոչինչ, առողջանում են: Ել, Սոս, ենպես վախեցա, ենպես վախեցա, քիչ եր ֆնում լեղիս պատուվեր:

ՍՈՍ. Ո՞վ եր, արդյոք, եղ չարագործը:

Լեւոն. Ո՞վ: Յես կարծում եմ... (Ներս ե գալիս դատախազը):

ՏԵՍԻԼ 2.

ԴԱՏԱԽԱԶ. Փոքրիկներ, Մովսիսյանների խրճիթը վաճառե՛ք:

Լեւոն. Հենց սա յե՛:

ԴԱՏԱԽԱԶ. Իսկ ո՞վ է Լեւոն Մովսիսյանը:

Լեւոն. Յես եմ:

ԴԱՏԱԽԱԶ. Դուք պատկոմ է՞ք:

Լեւոն. Այո, այո, յես եմ պատկոմ Լեւոն Մովսիսյանը:

ԴԱՏԱԽԱԶ. Ուրեմն այն թղթակցությունը ձե՞րն է:

Լեւոն. Վաճառե՛ք:

ԴԱՏԱԽԱԶ. Այ եհ, վոր գրում է, թե Սաքո և Ստեփան Մովսիսյանները վրա հարձակվողների անունները հայանի յեն, և վոր ձեր գյուղխորհուրդը գտնվում է կուլակների ձեռքում, և գործին ընթացք չի տրվում...

Լեւոն. Այո, յես եմ գրել:

ՍՈՍ. Այ քեզ նորություն... Կեցցես դու, Լեւոն:

ԴԱՏԱԽԱԶ. Ուրեմն, ընկեր Լեւոն, յես կանցնեմ գործի և կաշխատեմ չուտ վերջացնել...

Լեւոն. Խնդրեմ, վոնց վոր կամենում եք, համեցեք, մտնեք խրճիթ: (Սասիկ) Իսկ դու, Սոս, լեղուդ քեզ պահիր. բան չխոսես:

ՍՈՍ. Միանգամայն կարող ես հագլխտ լինել. կապանեմ, վոնց վոր պետք է:

(Լեւոնը դատախազի հետ մտնում են խրճիթ. Սոսը մեծակ բեմի վրա յերգում է «Մենք պատկոմ ենք» ու ֆայլում. ներս ե գալիս Ան. խոսք)

ՏԵՍԻԼ 3.

ԱՆԱԽԱԶ. Ի՞նչ ես ձենդ գրել, փուչ կենդանի, փուչ... Ասա, Սիրուշը ետեղ չի՞:

ՍՈՍ. Յես նրա պահապանն եմ, ի՞նչ է:

ԱՆԱԽԱԶ. Ուրեմն այստեղ ե. սաղ ուրը վազվզում է գետին մտածը: Հենց վոր միքիչ դնգստեցի, ես կողմն ե գալիս: Այ թե ի՞նչ պաշտպաններ ե գտել, այ անիծվեք դուք...

ՍՈՍ. Ի՞նչ, չէ՞ս հավանում մեղ. սպասիր, շուտով նա յեկ պատկոմ կդառնա:

ԱՆԱԽԱԶ. Պատկոմ... այ պապանձվի լեզուդ. յես նրան...

ՍՈՍ. (Ընդհատելով) Դու նրան ի՞նչ կանես:

ԱՆԱԽԱԶ. (Սպառնում է ձեռնափայտով) Կապանեմ նրան, կսպանեմ...

ՍՈՍ. Իրավունք չունես, բանտ կնստես:

ԱՆԱԽԱԶ. Ի՞նչ, ի՞նչ ասացիր...

ՍՈՍ. Ասում եմ՝ բանտ կնստես:

ԱՆԱԽԱԶ. Ձե՛ր ի՞նչ գործն է... Թե՛հ, անաստված, անորեններ...

ՍՈՍ. Ե՛յ, Անախաս տատի, շատ մի բարկանար. թոքերիդ ֆուս է:

ԱՆԱԽԱԶ. Ձենդ կտրիր, լի՛րք (բարձրացնում է փայտը յեկ վազում Սոսի յետեվից: Սոսը ձիծաղելով փախչում է. այդպես նրանք բեմի վրա միմեկի օրջան են կատարում: Այդ ժամանակ խրճիթից դուրս ե գալիս դատախազը Լեւոնի հետ յեկ յերես առ յերես հանդիպում Անախասին):

ԴԱՏԱԽԱԶ. Կամաց. ո՞նց ի՞նչ...

Լեւոն. Ահա ձեղ, ընկեր գատախաղ, և ի՞նքը Անախասը: Իրա վտարով ե յեկել:

ԴԱՏԱԽԱԶ. Ե՞ն Անախասը:

Լեւոն. Հենց ի՞նքը:

ԴԱՏԱԽԱԶ. Դե, պառավ, հանգստացիր և նստիր այստեղ:

ԱՆԱԽԱԶ. (Հանկարծակի յեկած) Ի՞նչ է, ինձ հետ ի՞նչ գործ ունեք:

ԴԱՏԱԽԱԶ. Նստիր, պառավ, նստիր, դու բանտարկված ես:

ԱՆԱԽԱԶ. Մեղա քեզ, տե՛ր. ինչո՞ւ...

ԴԱՏԱԽԱԶ. Սաշոյի և Ստեփանի մահափորձին մասնակցելու համար:

ԱՆԱԽԱԶ. Բողոքում եմ, Բրիտանիա. յես անմեղ եմ. նա յեր, նա:

ԴԱՏԱԽԱՍ. Եղ ռի և Նա:

ԱՆԱԽԱՍ. Բալոն:

(Գատախագը ձեռնով նետն է անում, յեվ յերկու միլիցիոնը
նետն են բերում Բալոնին):

ՏԵՍԻՍ 4.

ԴԱՏԱԽԱՍ. Մարդասպանը սո՞յս յե:

ԱՆԱԽԱՍ. Հո՛, հո՛, դա յե. կացնով...

ԲԱՆՈ. Իսկ ռի եր ինձ շարունակ դրդում, քաջալերում, իսկ ռի ինձ
հարբեցրեց. դու չեյի՞ր, քաղթառ: (Ուզում է հաբձակվել
Սնախասի վրա. նրան բռնում են):

ԴԱՏԱԽԱՍ. Շատ բարի. ձեզ յերկուսիդ ել քաղաք կուղարկեմ. թող
այնտեղ դատեն ձեզ:

ԲԱՆՈ. Ներողություն, եզ վո՞նց թե քաղաք կուղարկեք. ի՞նչ փաստեր
ունեք:

ԴԱՏԱԽԱՍ. Փաստեր չսո՛ւ. առաջին — ցուցմունքներ կան. յերկուսիդ —
փոքրիկ թղթակցություն կար լրագրում. ձեր գյուղացին եր
զրեկ. և յերրորդն ել հենց ինքներդ ասացիք...

ԲԱՆՈ. Զի՛ կարող պատահել, ձերդ գերադանցություն, ֆուհ, պարոն,
ֆուհ, քաղաքացի, ընկեր. մեր գյուղում թղթակիցներ չկան.
Թղթակցություններ եյին գրում Սաքոն ու Ստեփանը... դեհ,
նրանք ել...

ԼԵՎՈՆ. (Մոտենալով Բալոնին) Յեվ նրանք քո շնորհիվ հիվանդանոցում
են պառկած և չեն կարող գրել, հո՛: Այդպես ես կարծում,
Բալո. ճիշտ ես դատել, Բալո, շատ ճիշտ. միայն մի բանում
սխալվել ես, վոր մեկի ձեռքից գրիչը անցնում է մյուսի
ձեռքը՝ յեղբորից յեղբորը, հորից վորդուն, և մենք ել միշտ
պատրաստ ենք փոխարինելու մեր մեծերին:

(Վարագույր)





Գ Ի Ն Ն Ե 30 Կ Ո Պ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0303904

12.340

291.71

8-59